

այն ժամանակ Ձեր սրբազան Տէրութեան անունը երկնքի
 չափ կը արձրանայ, կփայլի և կգովուի բոլոր երկրիս վերայ,
 իսկ եթէ այս բանին հաճութիւն կտայ Տէրութիւնդ, այն
 ժամանակ լաւ կլինի եթէ ձեր կարգադրութեան մասին ծա-
 նուցանէք և պ. Կոստակային գրելով, թէ ես լսելով որ Տըփ-
 խիսի Հայոց ուսումնարանը ունի պակասութիւն, հրամայե-
 ցի Հոգեւոր Կառավարութեան տալ եկեղեցական արդիւնքնե-
 ցի Հոգեւոր Կառավարութեան տալ եկեղեցական արդիւնքնե-
 րից այսքան ու այսքան: Սորա մասին պ. Կոստակայը շատ
 անգամ ասել է մեզ, թէ ուսումնարանը ազգային է և դուք
 Թոշնոմ էք անխնամ ինչպէս տեսնում եմ, որի մասին առաջ
 էլ յայտնել ենք Տէրութեանդ: Բայց ինչպէս Կոստակա-
 յին, այնպէս էլ մեզ այնպէս կգրէք, թէ այն բոլոր արդիւնքը յո-
 գուտ ուսումնարանի կոնօրինէ Հոգեւոր Կառավարութիւնս
 կամ վիճակաւոր արքեպիսկոպոսը և ոչ թէ կօմիտէտը, որ
 ինչ ուզենայ անէ առանց Կառավարութեանս վերահասու-
 թեան:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՒՄԺ ՄԵՐ ՀԻՆ ՄԱՏԵՆԱ- ԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Մեր մատենադարանի Թղթերում գտնուեցան կէս Թերթ
 Թղթի վերայ գրուած հետեւեալ պատմական երկու հա-
 տուածները, որոնց վերջը արտագրողի ձեռքով գրուած է
 այս ծանօթութիւնը. «այս հայոց պատմութեան և Բագ-
 րատունեաց պատմութեան հատուածները բաղուեցաւ մի
 ձեռագրէ, Ղըիմեցի Յակովբ վարդապետին տումարի մեկ-
 նութիւն անուանեալ, որ Քրիստոսի 200 տարուան»:

Պատմութիւն Բագրատունեաց՝ որ յԱնի Թագաւորեաց
 (Թագաւորեցին):

Աշոտ որդի սմբատայ՝ Թագաւորէ Հայոց ամս. Ե. — ՅԼԶ
 Թվականին: 'Ի սորա աւուրս էր Սահակ վարդապետ և Վահ-
 րամ, որ զվերլուծութիւն առական գրեաց և զՅօբայ, և
 զԱւրհնութիւնս որ 'ի գլուխս կանաւնաց, և զտնքիծան գիրը
 մի, և զմեկնութիւնս քերականին:

Մբաւ որդի նորա ամս. ԻԴ. 'ի սորա աւուրս էր Մաշտոց. 'ի սորա աւուրս էր Հայր Գագիկ. Հայր ուխտին սբ. Ատոմայ, զոր յիշատակ վկայիցն հաւաքեաց գիրս, որ «Ատոմայ-դիրսն» անուանի: Վախճանի Աշոտ թագաւորեալ ամս Ը. յետ սըմբատայ թագաւորեաց Գագիկ եղբայր նորա:

Յետ Ադամայ ելից զրախտին ԵՌ, ինն հարիւրին ՀԶ. ամին զթվականն հայոց եդին և յետ ծննդեան փրկչին Յեառն ՇԽԳ ամին, և յետ մերոյ Լուսաւորչին ՄԽ ամին. 'ի Հսյրապետութեան տէր Մովսէսին Ժ. ամ անցեալ, զթվականն եդին. զի գիտասցուք կարգաւ մէն մի զանցեալն, զներկայն և զապառնին: Որք զթվական հայոց եդին, զՅուժարն նոքա սահմանեցին՝ էր վճարեալ զթիւ շրջանին, յորժամ զՅուժարն շինեցին: Յետ թվականի Ճ. ամին, Անանիայ չիրակացին ելից զպական տումարին՝ հանապազորդ զուգեալ նմին: Յորժամ զթվականն հայոց եդին, էր եղանակ ձմեռնային, և Յայանութիւն աւուր նմին:

Աշխարհ«ի» Հայոց է սյս պատմութիւն:

Նախ քան զամենայն խնդրեսցուք զեղեալքս՝ զէն, և ապա զ'ի նմանէ եղեալքս, զի թէպէտ արարածքս՝ պատճառ լինին գիտութեան Արարչին, զի յարարածոցս ճանաչի Արարիչն ըստ Պողոսի. թէ աներևոյթք նորա, 'ի սկզբանէ արարածովքս իմացեալ ճանաչի, և ըստ Դաւթի թէ «երկինք պատմեն զփառս Աստուծոյ, այլ առանց գիտութեան Արարչին՝ անօգուտ է գիտութիւնսոցա. այլ թէ վասն Աստուծոյ գիտութիւն լինի, գիտութիւն սոցա զի արարածովքս ճանաչի զԱրարիչն. յայնժամ կարի գեղեցիկ է քննութիւն գոյիցս: Արդ-Քրիստոս ինքն Աստուած անպատճառ է և ինքնէ բնութիւն բարի, և միայն իմաստուն հայր է, և որդի և սուրբ Հոգի: Հայր ծնող՝ որդի ծնունդ, և սուրբ Հոգին բղխումն 'ի Հօրէ անսկզբնաբար, մի բնութիւն է երից անձանցն՝ անձամբ, և անուամբ յատկացեալ է. և էութեամբ միացեալ զուգաբար՝ և համապատիւ մի Աստուածութիւն և մի թագաւորութիւն: Ո՛չ կամեցաւ ինքն միայն վայելել զիւր առատ բարին, այլ շարժեալ սիրով յիւր բարեկամացն, և գոյացոյց զարարածս զիմանալիքն և զգալիքս. և ինքն միայն է անեղ, և յետ նորա ամենայն եղականք են: Նախ՝ խորանն անմատոյց, ուր կայ Աթոռ Աստուածութեան, 'ի վեր է քան

ղամենայն եռութիւն և ոչ որ կարէ յեղական արարածոցս մտանել, կամ տեսանել 'ի խորանն այն, այլ ինքն միայն կայ սուրբ երրորդութիւն՝ բնակեալդ 'ի լոյս անմատոյց. և յետ նորա հրեշտակաց կայանքն, նախաթող դասուն, և քերորբէիցն, որ հանապազ կան 'ի փառաբանութիւն Աստուծոյ, զի տեսանեն զփառքն Աստուածութեան. և կապեալ կան 'ի սէր նորա. և ոչ կամին հեռանալ 'ի նմանէ. և ոչ տեղեկանան հաստուծն, այլ կալմամբ և սիրով. զի անմարմին բնութեամբ տեղի ոչ ասի, այլ տեղիք է նոցա կամքն և սէրն, զի ուր և կամին, անդ լինին. և այս երրորդ կամքն և սէրն, զի ուր և կամին, անդ լինին. և այս երրորդ դասս տեղեալ և փառք մի են և յետ նոցա տերութեանց, զօրութեանց, և իշխանութեանց, դասք միջին՝ բաճանայապետութիւնք, և յետ սոցա պետաց՝ հրեշտակաց և հրեշտակապետաց, դասք վերջին՝ բաճանայապետութիւնք, այս վեցերորդ դասս՝ զանազանին տեղուօք և փառք զանազանին. զի ոմն թագաւոր է և ոմն իշխան, ոմն բաճանայապետ և այլն ըստ կարգի, և է կայանք նոցա լուսեղէն երկինք, որ հաստատուն կայ անշարժ: Եւ ապա ջրեղէն կամարն հաստատեալ բանիւ Արարչին, և նա շարժի անդադար ըստ նմանութեան անուի. և կոչի սա առաջին շարժում:

Եւ 'ի դաշտն Արարատեան է սուրբ Էջմիածինն, որ էր Վաղարշապատ քաղաքն՝ Աթոռն թագաւորաց Հայոց մեծաց, և Դուռն քաղաք նմանն մին, և Խորվիրապն որ տեղիք չարչարանացն Գրիգորի սուրբ Լուսաւորչին 'ի մէջ օձիցն երեքասան տարի, և յետոյ բերաւ մարմինն ձեռամբ Գրիգորի Մագիստրոսի 'ի Կ. Պօլսէ, և եղաւ 'ի վիրապին:

Եւ 'ի բերան վիրապին հանգուցեալք կան շիրիմս, երկրորդ մեծահոջակ, և եռամեծին տիեզերալոյս վարդապետին Վարդանայ և Ներսիսի շինողի, և յիգտիպուղտի զինուորացն նշխարք այլ անդ կան: Իսկ 'ի կողմն Գարնալոյ (Գառնալոյ) դաւանից մեծ եկեղեցին՝ որ է Հայոց թառ, ուր կայ կենդանագիր պատկերն փրկչական, և սուրբ խաչն Թադէոսի առաքելոյն. և ճկոյթն սուրբ Վարդապետին. և այրի վանք՝ ուր կայ սուրբ գեղարդն Աստուածամուկ, ներկեալ արեամբ կենարարին. և տախտակն սուրբ Յապետին՝ Նոյեան նահապետին, և նա է տուն հաւատոյ Հայաստանեայց, հաստատեալ է (ի) սուրբ Լուսաւորչէն: Եւ Աղջոց վանքն՝ ուր կան

սուրբ Աջն սահմաննոս բահանային, և սուրբ Աջն ոստակէսի որդւոյն Գրեգորի Լուսաւորչին. և այլ բազում վանքեր, և Մայրաքաղաքն Գառնի, ուր կայ գերեզման Գէորգ Տայրապետին, և գեղեցկաշէն և զարմանալի Թախտն (գահն) Տրդատայ:

Տարաւն՝ Մուշ է, ուր կայ սուրբ ուխտն մշու սուրբ Կարապետին, և Աթանազինէ եպիսկոպոսին, եօթն խոտաձարակացն, և երկու ճգնաւորացն Անտօնի և Կրօնիդայ, և կոչի իննակննեան վանք, վասն ինն ահանցն աղբերացն քաղցրահամ. և կոչի զյաւկայ վանք՝ վասն առաջնորդի հօր վանացն: Եւ զառաջին պատարագն անդ արար սուրբն գրիգոր. և զազարու վանք, և Առաքեալքն՝ ուր կայ ձախ Աջն Պետրոսի և Պօղոսի. զոր եբեր սուրբ Լուսաւորիչն և այլ բազում սրբութիւնս: Եւ Նորդորոտի վանքն՝ որ է սուրբ Յովանէս, ուր կայ նշխարաց սուրբ Կարապետին, և շիշ իւղոյն՝ զոր եբեր Թաթէոս առաքեալն, և անդ պահեաց սուրբ Լուսաւորիչն՝ զոր եգիտ: Վանդիրն սուրբ աղբերիկն է, ուր կայ օծեալ խաչն՝ ի Տեառնեղբօրէն Յակոբայ՝ ի գաւառին Թուխայ. անդ է և սուրբ բւեռն Քրիստոսի՝ ներկեալ արեամբն Տեառն:

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Ս. Պ. Բուրգի Հայոց հոգևոր կառավարութեան քարտուղար պ. Ա. Սահառունին հաճեցաւ մեր տրամադրութեան յանձնել հանգ. պրօֆ. Ս. Նազարեանի նամակների մի շարք, ուղղուած տեղւոյն հայ հովիւ հանգ. Եփրեմ վարդապետ Ալթունեանին, բոլորն էլ գրած մաքուր գրաբառ լեզուով: Այդ նամակներից երկուսը զետեղում ենք «Լումայի» այս գրքում, ձեացածներն էլ հետզհետէ կհատարակուին հետեւեալ գրքերի մէջ:

Ս. Նազարեան մեծապատիւ Հօր Եփրեմայ խնդալ:

Ըստ խոստմանս ընթանամ իսկ. օգնութեամբ Բարձրելոյն ժամանեցի ՚ի Դօրպատ յերկրորդ թիւ ամսոյս ՚ի վեցե-